ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «23» 04 2019թ № 250-Ա

«ՆԱՐԵԿ» ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՓԲԸ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՕԲՅԵԿՏԻ) ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի № 624-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 20-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի № 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Նարեկ» գիտահետազոտական ՓԲԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին նշանակել սույն հրամանի հավելվածում նշված Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին՝ համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ № 009/S-025, № 002/B-006) № 1-A և № 1-B հավելվածներով սահմանված հավատարմագրման ոլորտում ընդգրկված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի, ցուցանիշների և համապատասխան տեխնիկական կանոնակարգով սահմանված փորձարկման (այդ թվում՝ նմուշառման) մեթոդը սահմանող փաստաթղթերի նշագրերի:
2. «Նարեկ» գիտահետազոտական ՓԲԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին համապատասխանության գնահատման մարմին նշանակել մինչև 2022 թվականի

հոկտեմբերի 10-ը, տրամադրել նշանակման վկայական՝ Ն-16 և շնորհել նույնականացնող համար՝ Ն-16(Հ-16)2019:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2017 թվականի հուլիսի 6-ի ««Նարեկ» գիտահետազոտական ՓԲԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին Եվրասիական տնտեսական միության ԵԱՏՄ (ՄՄ) մի շարք տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին»№ 624-Ա հրամանը:

4. «Նարեկ» գիտահետազոտական ՓԲԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի № 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Ա. Բաբայանին:

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի 2019 թ.
_____ ____-ի № _____-Ա հրամանի

ՑԱՆԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՀ) ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ

Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգ՝

1. ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» № 1546-Ն որոշում

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգեր՝

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի № 769 որոշմամբ հաստատված «Փաթեթվածքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 005/2011)
2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի № 797 որոշմամբ հաստատված «Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 007/2011)
3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի № 799 որոշմամբ հաստատված «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 009/2011)
4. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի № 874 որոշմամբ հաստատված «Հացահատիկի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 015/2011)
5. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի № 876 որոշմամբ հաստատված «Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 017/2011)
6. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի № 878 որոշմամբ հաստատված «Անհատական պաշտպանության միջոցների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 019/2011)
7. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի № 880 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 021/2011)
8. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի № 881 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի մակնշման մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 022/2011)

9. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի № 882 որոշմամբ հաստատված «Մրգերից և բանջարեղենից պատրաստված հյութերի արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 023/2011)
10. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի № 883 որոշմամբ հաստատված «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 024/2011)
11. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 15-ի № 32 որոշմամբ հաստատված «Կահույքագործական արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 025/2012)
12. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 20-ի № 58 որոշմամբ հաստատված «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 029/2012)
13. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի № 67 որոշմամբ հաստատված «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 033/2013)
14. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի № 68 որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 034/2013)
15. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 18-ի № 162 որոշմամբ հաստատված «Ձկան և ձկնամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 040/2016)
16. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի № 45 որոշմամբ հաստատված «Փաթեթավորված խմելու ջրի, ներառյալ բնական հանքային ջրի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 044/2017)